Արձանագրություն N 4

«ԳՀԱՊՁԲ-2019/16-28-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «_31__»«հուլիսի» 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Խ.Մարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Խաչատրյան, Ի.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Առաքելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

Բացակայում էին՝

1. «ԳՀԱՊՁԲ-2019/16-28-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի ընտրված մասնակիցների որոշման մասին

1.1 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից, էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է հարցման մասին տեղեկատվությունը, առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների մասով, ինչպես նաև սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 46-րդ կետի համաձայն, հանձնաժողովի գնահատմանն է ներկայացվել կոմիտեից ստացված տեղեկատվությունը և առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ սահմանված ժամկետում գնահատելու համար:

1.3 Կոմիտեից ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են բավարար, բացառությամբ ընկերության կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի, մասնավորապես՝

- Հրավերով սահմանված է՝ Ինտերֆեյսի բոլոր էլեմենտները (կոճակներ, հղումներ և այլ) և անատոմիայի օբյեկտները պիտի աղապտացված լինեն՝ **հպումային էկրանից դրանց կառավարման համար**: Իսկ մասնակցի կողմից ներկայացվել է՝ ինտերֆեյսի բոլոր էլեմենտները (կոճակներ, հղումներ և այլ) և անատոմիայի օբյեկտները աղապտացված են՝ **մկնիկ տեսակի մանիպուլյատորով կառավարման համար**:

1.4 Ընկերությունը ծանուցվել է ՀՀ կառավարության N526-Ն որոշման 47-րդ կետի համաձայն, այն է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով

ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Խ.Մարգարյան

Անդամներ՝ _____ Գ.Խաչատրյան

_____ Ի.Խաչատրյան

_____ Ա.Հովհաննիսյան

_____ Ս.Առաքելյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան